



## Մխիթար Գոշ

### Գիրք Դատաստանի

21

#### ԳԼՈՒԽ ՄԽԷ ՎԱՍՆ ՍԻՒՆՕՌՈՒ, ՈՐ Է ՍԱՀՄԱՆՔ

Սահմանք գաւառաց լերամբք, եւ գետովք, եւ արձանօք հաստատեցին, նմանապէս եւ՝ գեղից: Եւ գեղք ի սահմանս շինեալք յերկուց կամ յերից գաւառաց, զոյգ բաժանեցին առաւելութեամբ եւ նուագութեամբ. նմանապէս եւ՝ անդաստանք եւ այլք ի սահմանս գեղից, սոյնպէս եւ՝ ծառք բուսեալք ի սահմանս անդաստանաց: Իսկ գմիջոցի ցանկս այգեաց զոյգ երկաքանչիւրքն դիցեն, զի թէպէտ առաջինն իւրոյն աղագաւ եղ, երկրորդին մի՛ լիցի պատճառք՝ միշտ նմա դնել, զի թէ այն ոչ էր, իւրն հարկ էր միանգամայն դնել, կամ որ ստացաւ կամ եղ այգի յաղագս այնր, զի մի՛ դիցէ ցանկ: Ըստ այսմ լիցի եւ տանց որոնց եւ այլոց այսպիսեաց:

#### ԳԼՈՒԽ ՄԽԸ ՎԱՍՆ ԴԻՒԱՀԱՐ ԱՆԱՍՆՈՑ

Այսահարութիւն յանասունս գտեալ՝ ոչ ինքեանց լինի աղագաւ, զի ոչինչ մեղան, այլ վասն մեր խրատու, որպէս ի խոզերամակսն Գերգեսացոց, զի ուխտ եղին նոքա չտեսնել զՏէր մեր: Արդ, յայտ է, զի անասնոցն ոչ իշխէ դեմ, այլ թոյլ տայ Աստուած ի գարհուրումն տերանց: Արդ, յորժամ պատահի ի նոսա, արժան է տերանցն զգուշանալ եւ զհտել, զի խնայելով ի նոսա ոչ ետ թոյլ բարեգութն Աստուած. ապա թէ անփոյթ արասցեն՝ մի գուցէ եւ ի նոսա մտցեն: Խոստովան լիցին զմեղս իւրեանց եւ աղօթիւք եւ պահօք ըստ կարի երեք ամ զքառասնորդսն

պահելով եւ խաչի եւ Աւետարանաւ կնքելով, թերեւս հաճեցի Աստուած եւ հալածեցէ, եւ բանականքն ազատեցին ի կարծեացն: Ապա թէ ոչ բժշկեցի, գննեցեն եւ յայլազգիս վաճառեցեն: Ապա թէ բժշկեցի եւ երեք ամ այլ ոչ լիցի, թէ գննեալ կերիցեն եւ թէ քրիստոնէից վաճառեցեն՝ անվնաս լիցին ի կամս Տեառն. եւ այդ՝ եթէ ի տանէ պատահի: Իսկ թէ գնեալ իցեն, եւ այնոցիկ պատահի, հաւատարմացուցէ վկայիք, թէ ի տան նորա չիցէ լեալ, ապա թէ ոչ կարէ՝ անդրէն դարձցի: Եւ թէ գկնի գնելոյն իցէ, ոչ դարձցի: Այլ ժամանակ դարձին յամենայն ժամ լիցի, թէ ի վաճառողին տանն ախտն լեալ իցէ: Նոյն դատաստան դարձեալ եւ խելագարիցն լիցի:

Իսկ գանուտելիսն՝ անբժշկելի եղեալ, յայլազգիս վաճառեցեն, եւ զբժշկեալն՝ քրիստոնէից. այլ դարձուցանելն նոյն լիցի: Այս դատաստան կանոնական է. թէ հաճոյ թուեցի՝ այսպէս հաստատուն կացցէ, եւ թէ ոչ՝ որպէս կամին արասցեն:

## ԳԼՈՒԽ ՄԽԹ ՎԱՍՆ ՈՐ ԶՓՈՔՐ ԱՂԶԻԿ ՀԵՏ ՄԵԾ ՄԱՐԴՈՅ ՊՍԱԿԵՆ

Կանոնական հրամանաւ է տղայոց պսակ ոչ օրհնել մինչեւ ի գիտել զկարիս բնութեանն: Ապա թէ պատահի անկատար լինել կինն, եւ կատարեալ՝ այրն, կրկին չար է, զի որպէս ուսաք ի խոստովանութենէ՝ զի յամուսնանալն հատանի կապ միջոցի երկուց վտառացն, յորմէ եւ մահանայ: Արդ, այսպիսի վնասուս կանոնական լիցի դատաստան. զի կամաւոր սպանողի զկարգն երիցն դնել՝ ծնողաց հարսինն, եւ փեսային, եւ ծնողաց նորա. եւ քահանային լուծանիլ ի կարգէն. եւ զխնամէխօսս չառնել անպարտ, այլ յակամայիցն դնել ի կարգն: Եւ եպիսկոպոսաց պարտ է յոյժ սաստել այնպիսեացն:

## ԳԼՈՒԽ ՄԾ ՎԱՍՆ ՈՒԽՏԻՑ

Տեղիք ուխտից, եթէ վկայարանք են եւ թէ այլ ինչ տեղիք շնորհաց աստուածայնոց, եւ կամ նշան խաչի հաստատեալ, յոր եպիսկոպոսի վիճակ իցէ, յորոյ գեղջի իցէ՝ երիցուն տացէ, յորոյ սահման ուխտն իցէ, զի զգուշութեամբ սպասաւորեցէ, թէ պատահի ի հեռաւոր տեղիս լինել: Ապա թէ ի մէջ սահմանաց իցէ, զոյգս սպասաւորեցեն քահանայքն եւ զհաս շնորհին ի գործ սպասու եւ կազմուածին ածիցեն, սակայն եւ ինքեանք վայելեցեն առանց

ամենայն հակառակութեան: Այլ մի յաղագս ընծայիցն, զոր վասն բժշկութեան մատուցանեն, պատերազմեսցին, այլ յեպիսկոպոսէ ժառանգութիւն այնմ լիցի, որ բարիոք սպասատրեսցէ: Ապա թէ ազահեալք գտորբ տեղիսն ի հարկ արկանիցեն եւ խրատու եպիսկոպոսին ոչ անսան, ունայնանայ աստուածային շնորհքն, եւ պարև տական այնմ լիցին պակասութեան, որում համարս տալոց են, իբր հակառակ մարդասիրութեանն Աստուծոյ եւ բարի կամաց սրբոց, զի ձրի բարեխօսք լինին միշտ աշխարհի: Այսպիսեացս քարոզ կարդալ արժան է եպիսկոպոսաց, զի մի՛ ինչ ընծայ տարցին, այլ զընծայսն ի տունս իրեանց աղքատաց տայցեն եւ ինքեանք երթեալ աղօթեսցեն, զի մի՛ շնորհ յեկեղեցոյն յայլագգիս անցցէ: Քանզի խորհրդականք են ամենայն ընծայք. զի դահեկան, յաղագս անախտ բնութեանն, խորհուրդ է աստուածութեանն Քրիստոսի, իսկ պատկերն փրկչական՝ մերն պատկեր. զորէտ զյառաջագոյն շնորհեալն զիրն պատկեր, ըստ այսմ՝ տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ: Իսկ վեց դանգն խորհուրդ է ժամանակաց գալստեանն Քրիստոսի, իսկ չորս թասուն՝ օրինակ չորից տարերացս եւ խորհուրդ չորից անտարանչացն, իսկ երկոտասան գարին ի դանգն՝ երկոտասան առաքելոցն, իսկ եւթանասուն եւ երկու գարին ի դեկանն՝ եւթանասուն եւ երկու առաքելոցն, իսկ դրամն՝ օրինակ բնութեանս մեր, զի մարդ տառիւքն է անդրադարձութեամբ: Իսկ այլ նիւթքն, որպէս ի խորանն նուէրքն եւ ի տաճարն ընծայեալքն, այսպէս են, իսկ անընծայքն՝ անխորհուրդ: Արդ, ի խորհուրդ եկեալքն մի՛ լիցին ընդ անխորհուրդսն յայլագգիսն, ապա թէ յանդգնին՝ լուծցէ եպիսկոպոսն եւ ի կարգէն: Այլ զխաբեբայսն բնաւին հալածել, որ գան ձեւօք կրօնատրաց եւ բնակին ի տեղիս ուխտից եւ բազում գայթակղութիւնս տան գործել պարզամտացն, մոլեալք յորովայն եւ յայլ ախտս, ստութեամբ պատմիչք լինին երագոց եւ զբազումս մոլորեցուցանեն:

## ԳԼՈՒԽ ՄԾԱ ՎԱՄՆ ՅԱԻԱՐԷ ՎԱՃԱՌԱՅ

Վաճառեալ եւ գնեալ գաւար՝ ոչ դարձցի անդրէն իբրեւ զգողացեալն, զի այդ օրինաւոր գործ թագաւորաց է եւ իշխանաց, ուստի եւ կանոնք յնծայս ընդունի պատարագի, իսկ զգողացեալն եւ զյափշտակեալն՝ ոչ եւս: